04.11.2021 թ. Երևան

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին
ՀՀ քաղաքացի Արմեն Աբրահամի Լուսինյանից
Բնակության և ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 8 շ, բն. 26, 0033

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի պարոն Մարության

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար։

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունը.

1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2021թ. դեկտեմբերի 4-ը, ժամը 00:00-24:00-շուրջօրյա
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի ներքաղաքական հարցերի քննարկում
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 1000, պահպանելով համավարակի հետ կապված բոլոր օրինական պահանջները։
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ դրոշներ, պաստառներ, վրաններ, պլաստիկե սեղաններ և աթոռներ, հովանոցներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր։
6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ։
7. Հավաքի ընթացքում (ժամը 18:00-21:00) նախատեսվում է երթ՝ Ազատության հրապարակ-Մաշտոցի պողոտա-Կորյունի փողոց-Նալբանդյան փողոց- Հանրապետության հրապարակ-Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Ազատության հրապարակ երթուղով։
8. Կազմակերպչի (հավաքի ղեկավարի) տվյալները՝

   Ազգանուն, անուն, հայրանուն՝ Արմեն Աբրահամի Լուսինյան,
   Նույնականացման քարտ՝012538310, տրված 03.02. 2020, 001-ի կողմից
   Հեռախոս՝ 096979734
   Փոստային հասցե՝ 0033 Երևան, Կոմիտաս 8 շ., բն. 26
   Էլեկտրոնային հասցե՝ armen1375@yandex.ru:
   Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

   1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը
   2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով։

   Առդիր՝ հավաքի կազմակերպչի նույնականացման քարտի լուսապատճենը՝ 1 թերթ։

   Հարգանքով՝

   Հավաքի կազմակերպիչ (հավաքի ղեկավար)
   Արմեն Լուսինյան